№ 171 ՈՒՐԲԱԹ ՕԳՈՍՏՈՍԻ 26

1905

ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ. Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak». Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ. Տէլէֆօն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վերջին տեղեկութիւններ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վանքապատկան գոյքեր. Նամակ Բաղուից. Նամակ Նուխուց. Ներքին լուրեր. —ՀԵ-ՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Լարված ուշադրութեամբ մենք հետեւում ենք Բաղուի շրջանում կատարվող եղելութիւններին: Աւերման գործը դեռ չէ դադարել: Հրդեհը չէ հանգել և նրա տուած ՀՏասները օրէցօր աւելի մեծ դժուարների է հանում:

Շատ ողբերգական է Զաբրաթ կոչված նաւթահանքերում գտնվող հայ ազգաբնակութեան դրութիւնը: Մի քանի գործարաններում գտնվող պաշտօնավարները արհեստաւորների և բանւորների հետ միասին շրջապատված են թուրք խուժանով և մինչև այժմ չեն կարողանում իրանց ազատել: Նրանց թշուառ դրութեան մասին յայտնված է ի տեղեկութիւն Փոխարքայի օգնականին ըստ ոստիկանական մասի:

Բաղուում և նրա շրջակայքում անհրաժեշտութիւն զգացվեց դիմելու թնդանօթի: Գեներալ-նահանգապետի կարգադրութեամբ մի թնդանօթ սկսեց ռումբեր արձակել Բալախանիի շրջանում, միւսը քաղաքում: Թնդանօթի հարուածներից ՀՏասվել են Բալախանիում յարձակվողների մի խումբ, իսկ քաղաքում մի քանի տներ:

Օգոստոսի 24-ին նորից յայտարարվեց հաշտութիւն հայերի և թուրքերի միջև, ինչպէս մենք երէկ հաղորդեցինք, երկու կողմերի ներկայացուցիչները թափօրով անցան քաղաքի փողոցներով. սակայն այդ թափօրը ոչ մի բարոյական նշանակութիւն չունի ներկայումս, որովհետև կռուող կողմերը ոչ միայն հաւատ և նշանակութիւն չեն տալիս այդպիսի թափօրներին, այլ նոյն իսկ աւելի վրդովվում են, որովհետև մի քանի անգամ կրկնվել են այդ թափօրները. սակայն նրանցից յետոյ նորից տեղի են ունեցել ընդհարումներ և հոսել է արիւնը առատ կերպով:

Իսկ եթէ թափօրները չեն հասնում իրանց նպատակին, ուրեմն, ում և ինչի համար են նրանք սարքվում: Թափօրի նշանակութիւնը Բաղուի առաջին կոտորածի ժամանակ ընդունվում էր, որովհետև փոքր ի շատէ պատկառանք և երկիւղած վերաբերմունք կար դէպի երկու կռուող կողմերի հոգևորականութեան և ժողովրդի ներկայացուցիչների համախմբումը. իսկ այժմ, երբ վստահութիւնը կորել է դէպի միմեանց, ոչ մի արդարացում չը կայ այդպիսի ծիսակատարութիւնների համար:

Հաշտութեան արարողութիւններից յետոյ թէ գիշերը և թէ երէկ առաւօտ շարունակվում են եղել հրացանաձգութիւններ քաղաքում թոյլ կերպով: Ազգաբնակութիւնը դուրս է գալիս փողոց, բայց զգուշութեամբ:

Պատմում են, որ նաւով Լենքօրանի կողմերից մի քանի հարիւր զինված թուրքեր փորձում են Բաղուի մօտ ափ իջնելու, բայց նրանց արգելք է հանդիսանում զօրքը:

Նաւթահանքեր չուր մատակարարող Զուղուլբի ջրանցքը, ինչպէս հաղորդել էինք, փչացրած է: Մառայողների մեծագոյն մասը ՀՏասված է:

Սաբունչիի երկաթուղիական կայարանը այրվել է և ճանապարհորդները ստիպված են մի կէս վերստ հեռուից գնալ դէպի վագոնները: Կարգադրութիւն է արված վերականգնելու վնասները շուտափոյթ կերպով:

Երկաթուղու մի երկու կայարանի վրա, օրինակ, Բալաջարիյում, Աջիկաբուլում տեղի են ունեցել հատ-հատ յարձակումներ ճանապարհորդների վրա, որոնք ունեցել են մահաբեր հետևանք:

Բուզովնա կոչված գիւղում, որտեղ Բաղուի հայերը ունեն ամարանոցներ, աւերվել և հրդեհի են ենթարկվել մի քանի տներ:

Շատ հայեր և նոյն իսկ թուրքեր թողնում են Բաղու և հեռանում զանազան տեղեր, իսկ մեծ մասամբ դէպի Թիֆլիս:

Գանձակի նահանգի զանազան տեղերից ստացել ենք անհանգստացնող լուրեր: Տեղական վարչութիւնը ստիպված է արձանագրել, որ համատարած յուզմունքի հետ համեմատ չեն տեղական միջոցները, որոնք մի և նոյն ժամանակ ցրված են և առանձին-առանձին թոյլ: Ուստի անհրաժեշտութիւն է զգացվել կենտրոնացնելու բոլոր զինուորական ոյժերը մի անձի ձեռքում՝ գեներալ Տակայշվիլու հրամանատարութեան և ղեկավարութեան տակ:

Գանձակում մեծ ջանքեր են արված պահպանելու հանգստութիւնը, բայց խուլ յուզմունքը շարունակում է սպառնալի ընաւորութեան մէջ պահել բոլորին: Հաջիքեանդում խուլիգանների խմբակներ ցանկութիւն ունէին խառնակութիւններ առաջ բերել, բայց աջողութիւն չունեցան:

Գանձակի փոխ-նահանգապետ Բարանովսկին ուղևորվել է Գանձակ: Որքան մեզ յայտնի է, նա Գանձակից պէտք է գայ Թիֆլիս անձամբ զեկուցանելու նահանգում տիրող իրերի վիճակի մասին և յայտնել իր խորհրդակցութիւնները մարքսման միջոցների մասին:

Գանձակի նահանգում նոր աւերումներ տեղի են ունեցել Ջիբրայելի գաւառի մի քանի հայաբնակ գիւղերում, այն է Դուդուկչու, Աղբուլաղ, Խարմանջի: Գիւղացիները ենթարկվել են կողոպուտի և ով կարողացել է փախել է: Թուրքերը յարձակվել են մետաքսէ գործարանի վրա: Հարբուք գիւղը սպառնական վիճակի մէջ է:

Ջիվանշիրի գաւառի գիւղերը վտանգի մէջ են, որովհետև թուրքերի մէջ նկատվում են յուզմունքի նշաններ: Աշխատում են, որ ընդհարում չը ծագէ. բայց կարողվի արդեօք պահպանել խաղաղութիւնը:

Բաղու ուղարկված են Փոխարքայի կարգադրութեամբ նոր զօրքեր և արտիլերիա—երեք բատալիոն, մի հարիւրեակ և մի բատարէայ թնդանօթ:

—

Բաղուից, օգոստոսի 23-ին ցերեկվայ 4 ժամ 55 րոպէին մեզ գրում են.

«Թուրքերը հրդեհեցին նաւթահանքերը Բալախանիում և Բիբի-Էյբաթում: Նաւթահանքերի մեծ մասը պատկանում է հայերին: Զօրքերը անկարող են պաշտպանել: Գեներալ-նահանգապետի կարգադրութեամբ, հայ ազգաբնակութիւնը գաղթում է Բալախանիից դէպի քաղաք: Ոստիկանութիւնը նախապէս զինաթափ է անում նրանց: Ազդեցիկ թուրքերը իրանց գործած չարիքը ամեն կերպ աշխատում են փոխարինել հայերի վրայ: Թուրքերը սպանել են մի քանի կազակների և զինուորների: Գեներալ-նահանգապետը գործում է խիստ, բայց արդարացի: Բաղուի և Բալախանիի շրջանում սպանվածների և վիրաւորվածների թիւը անցնում է հարիւրից: Բոլոր մագազինները, դրամատունները և բանկերը փակված են: Կեանքը կանգ է առել քաղաքում»:

—

Բաղուից, օգոստոսի 23-ին, ցերեկվայ 5 ժամ 50 րոպէին մեզ հեռագրում են.

«Բամանիի մառայողները փրկութիւն գտան Բալախանիում: Շուրջը հրդեհ է: Հնարաւորութիւն չը կայ տեղեկութիւն ստանալ: Մաշտագովի մօտ մի քանի տեղերում վնասեցին գիծը և տելեֆօնը: Զուգուլբինեան մառայողների մասին տեղեկութիւններ չը կան: Քաղաքում առայժմ երկիւղալի է:

—

Բաղու, 25 օգոստոսի, 12 ժամ ցերեկվայ:

Այս գիշեր վերջնականապէս կրակը լափեց Բիբի-Էյբաթի հանքերը: Բանւորները դուրս հանվեցին, տարվեցին Բաքու: Կրակի մատնվեց և այրվեց Կասպեան ընկերութեան երկրորդ նաւթի ամբարը: Չը նայած գեներալ-նահանգապետի անձնական կարգադրութեան Զաբրաթի բանւորները դեռ շրջապատված են. նրանց վիճակը անյայտ է: Քաղաքը հանգիստ է: Քաղաք են գալիս մառայողները և բանւորները, որոնք կորցրել են ամեն բան և ժամանակաւորապէս տեղաւորված են Բաղուում: Բանւորները փախչում են: հարկաւոր է օժանդակութիւն տալ. հարկաւոր է փող:

—

Բաղու, 24 օգոստ., առ. 7 ժամ 34 րոպէ

Քաղաքի կրիտիքական դրութիւնը շարունակվում է: Երկու կողմերի զոհերի թիւը բաւական մեծ է: Բայց ճիշդ որոշելը առ այժմ անհնար է: Շնորհիւ զօրքի ձեռք առած միջոցների, աւերումներ և թալաններ առ այժմ չը կան և թուրքերի խմբական յարձակումները յետ են մղվում: Այրվում են Բալախանիի նաւթահանքերի, նոյնպէս տեղ-տեղ Սև Քաղաքում և նաւթահանքերում հայերի դրութիւնը նոյնպէս կրիտիքական է: Ձեռք են առնվել խաղաղացման միջոցներ:

Ի տեղի գործակալի՝

Աւագ քահ. Մարաղեանց

—

Բաղուից հեռագրում են «Кав.»-ին օգոստոսի 23-ից:

«Այրվում են Բալախանին ու Սև-քաղաքը: Ոստիկանապետի վրա 3 անգամ կրակ արին: Մի քիչ հանգստացած հրաձգութիւնը գիշերվայ դէմ սաստկացաւ:»

—

Հին-Նախիջեւան, 23 օգոստոսի, 2 ժ. 33 ր. ցերեկվայ:

«Երջեցի և քննեցի 20 ՀՏասված գիւղեր. ժողովրդի վիճակը անտանելի և խղճալի է, կողոպտված կայքերը և անասունները չեն վերադարձված, մնունդը խիստ վատ է: Դաշտերը չեն հերկված աշնան ցանքի համար: Պէտք է ազգաբնակութեանը մատակարարել անասուններ, այլապէս եկող տարի սովը անխուսափելի կը լինի: Հացով քիչ շատ ապահովված են միայն լեռնային գիւղերը, դաշտի գիւղերում հացի մեծ պակասութիւն է տիրում: Օգնութեան միջոցներ եմ մշակել, այս օրերս կը ներկայացնեմ գեներալ-նահանգապետին: Ուղարկեցէք մի բժիշկ, երկու ֆելդշեր, դեղօրայք: Անկողինների մեծ կարիք է զգացվում:

Գիւղատնտես Ա. Սահակեան

—

«Тиф. Л.»-ին հեռագրում են Բաղուից, օգոստոսի 24-ին, առաւօտեան 9 ժամին:

«Նաւթահանքերում հրդեհները շարունակվում են: Փչում է կատաղի հօրդը: Բալախանին մինչև վերջն այրվել է: Քաղաքում չեն դադարում հրաձգութիւնները զօրքերի վրա տների պատշգամբներից և կտուրներից: Պահակները պատասխանում են խմբական կրակով: Զօրքերը չափազանց յոգնել են: Նրանց թիւը քիչ է: Սաստիկ մեծ կարիք կայ մսի, հացի և ջրի: Երէկվայ փորձերը խաղաղութիւն զցելու՝ աջողութիւն չունեցան: Դրութիւնը սրվում է»:

—

Երէկ մենք հաղորդել էինք Դալմահմէդի և Ալաբաշլի գիւղերի վրա եղած յարձակման լուրը: Իսկ այժմ օգոստոսի 22-ին Դալմահմէդիից հաղորդում են, որ կայարան եկան հայ գիւղապետը և մի քանի գիւղացիներ, որոնք ուզում էին հեռագրել Թուրքերի մօտալուտ յարձակման մասին: Մօտ 100 Թուրքեր յարձակվեցին նրանց վրա և խլեցին նրանց զէնքերը: Մի և նոյն օրը կայարանի շրջակայ գիւղերի Թուրքերը հաւաքվեցին խմբերով և յարձակվեցին Խանքէնդ հայ գիւղի վրա: Երբ այդ բանը լսում է յայտնի աւազակ Դալի-Ալին, ինչպէս ասում են, անմիջապէս հասնում է իր աւելի քան 100 մարդկանցով և առաջարկում բոլորին ցրվել, եթէ ոչ սպառնում է խառնակութիւն սկսողների հետ հաշիւ տեսնել: Դալի-Ալիի պահանջն իսկոյն կատարվեց: Երեկոյեան դէմ հասան և մոլլաները, որոնք վերջնականապէս հանգստացրին յուզված Թուրքերին: Երբ այդ լուրը հասաւ Գանձակ, հայերի խանութներն իսկոյն փակվեցին և քաղաքում ահակոչ բարձրացաւ:

—

Մոսկվա 25 օգոստոսի 11 ժամ 25 րոպէ:

Պարսից Մուզաֆֆեր-Էդդին Շահը անցաւ այսօր առաւօտ ժամի 8-ին: Նա կանգ կառնէ Աջի-Կաբուլում: Ցանկալի է, որ պատգամաւորութիւնը լինի շատ քաղաքներից:

—

ՓՍԱՐՊԻ գիւղից մեզ գրում են. «Օգոստոսի 11-ին մեր գիւղում մի աչքի ընկնող երեւոյթ կար: Ամուրդի էին հանվում մեր հարեւան Ադարակ գիւղացի Հաջի-Նասիր-Օղլու հարուստ տան կահկարասիները և խանութի ապրանքները: Ապրանքի կողքին կանգնած էր Հաջի-Նասիր-օղլին՝ մի բարձրահասակ կրակոտ աչքերով, բայց չափազանց տխուր հայեացքով Թուրք երիտասարդ, որը ստէպ-ստէպ հառաչելով դիտում էր իր հարուստ տան քայքայվելը: Վերոյիշեալ Թուրքը իբրև հարուստ, սակայն թայֆայով Թոյլ, բռնադատվել է համագիւղացիներից կերակրել այն բոլոր մարդկանց, որոնք համաձայնել են գնալ Օշի հայերի դէմ կռուելու: Կռուի անաջողութիւնից յետոյ Թուրք գիւղերում հայերին կոտորելու համար կռուողներ պատրաստելու նպատակով հատատված միտքերը (այդ մասին տեղեկութիւն ունի և տեղիս ոստիկանութիւնը) որոշում են զինել Թուրքերին հարուստների հաշուով: Հաջի-Նասիր-օղլին ստիպված է լինում ամենաթանգագնով առնել և մի հրացան և ապա յոգուտ զինման խնդրի վճարել մի որոշ գումար: Զը բաւականացած դրանով կօմիտէտները նորից փող են պահանջում: Նա մերժում է: Նրանք որոշում են ծանր տուգանքի ենթարկել: Դադապարվածը դիմում է հասարակութեան տանուտէրին, որ գայ գործը խաղաղութեամբ վերջացնէ: Թուրքերը այդ իմանալով որոշում են սաստիկ ծեծի ենթարկել և բռնի միջոցներով դրամական տուգանք առնել: Նա իր մեծ եղբօրը փախցնում է, իսկ ինքը դիմելով տեղիս պրիստաւին, խնդրում է բերել իր ունեցածը Փարպի և ազատի հանել, որպէս զի ինքը առանց ծանրութեան ապահով կողմեր փախչել կարողանայ: Տունն ու արտերը թշնամիների ձեռքին թողնելը, ունեցածը ամենաէժան գնով ծախելը, և հայրենի գիւղը, օղն ու ջուրը ընդ միշտ թողնելը հեշտ չէ: Հաջի-Նասիր օղլին այդ զգում էր և շատ տխուր էր»:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԱՆՔԱՊԱՏԿԱՆ ԳՈՅՔԵՐ

Վանքապատկան գոյքերի և կալուածների կանոնաւոր շահագործման և կառավարութեան հարցը շատ անգամ զբաղեցրել է թէ հայ մամուլին և թէ հասարակութեանը: Ինչպէս նախորդ նամակում ասեցինք, Էջմիածնի բարձր իշխանութիւնը մի քանի անգամ ձեռնամուխ է եղել այդ կարևոր խնդրի լուծմանը. սակայն մինչև օրս այդ խնդիրը մնացել է առկախ: Այժմ «ժամանակաւոր կանոնները» դարձեալ հրապարակ են հանում այդ հարցը

և նրա բաւարար լուծումը հերթական և անյետաձգելի են դարձնում։

Փորձենք այդ խնդրի լուծմանը մօտենալ մեր մի քանի առաջարկներով, գուցէ այդպիսով մենք փոքր ինչ օգնած լինենք գործին։

Ցաւում եմ, որ ձեռքիս տակ չունեմ ճիշդ պաշտօնական տեղեկութիւններ, որոնք կարողանային պարզել քննելիք առարկայի հետեւեալ կէտերը։

ա. Ո՞ր թեմում, քանի՞ կոր, ի՞նչ քանակութեամբ վանքապատկան կալուածներ կան։

բ. Ի՞նչ տեսակի և մօտաւորապէս ի՞նչ արժէք ունեցող կալուածներ են դրանք։

գ. Ի՞նչ եկամուտ էին տանում այդ կալուածների իւրաքանչիւրից էջմիածինը կամ այս կամ այն վանքը վերջին տասնամեակում, 1893—1903 թիւը։

դ. Ի՞նչպէս էին շահագործվում դրանք, ի՞նչ տարեկան ծախքեր ունէին։

ե. Ո՞ւր էին գնում այդ եկամուտները։

Եթէ մեր ձեռքի տակ լինէին այս տեղեկութիւնները, այն ժամանակ մեզ աւելի հեշտ էր մասնաւորապէս քննել այդ հարցերը, բայց քանի որ չը կան—մեզ մնում է օգտվել մեր ունեցած ընդհանուր տեղեկութիւններից, և հարցին վերաբերվել ընդհանուր ակնարկներով։

Որքան մեզ յայտնի է, մեր վանքապատկան կալուածները, բնականաբար, կենտրոնացած են այն նահանգներում, ուր հնուց ապրել է ինքը հայ ժողովուրդը, ուր և շինված են բազմաթիւ հայ վանքեր։ Վանքերը միշտ ապահովված են եղել վանական կալուածների եկամուտներով. իսկ այդ կալուածները, նայելով վանքի կատարած պատմական և իրաւաբիրական դերին, եղել են զանազան մեծութեան։ Վանք առանց հողի՝ հազւագիւտ մի երևոյթ է։ Եւ որովհետև Հիւսիսային Հայաստանի ազգաբնակութեան մեծամասնութիւնը բնակվել է Արարատեան նահանգում, Սիւնիքում, Արցախում, ուստի և այդ նահանգներում խմբված են նաև հայկական վանքերը իրանց ընդարձակ կամ աւելի փոքր կալուածներով։

Արարատեան (Երևանի) նահանգը մեծ մասամբ զուրկ է անտառներից, ուստի և այդտեղի բազմաթիւ վանքերը զուրկ են անտառային կալուածներից. այստեղ կալուածները լաւ վարելահողեր են, գիւղեր, արօտատեղիներ, խոտհարքներ և մասամբ նաև խաղողի այգիներ—այն ինչ Արցախում և Սիւնիքում վանքական կալուածների մեծագոյն մասը կազմում են կուսական, շքեղ, հարուստ անտառներ։ Բացի այսօրինակ գիւղատնտեսական ընաւորութիւն ունեցող կալուածներից էջմիածինը և մեր վանքերը ունեն նաև ջրաղացներ, կրպակներ, տներ, քարհանքեր և այլ աւելի մանր միութիւններ, որոնց մեծագոյն մասը կամ կտակներով թողված նուէրներ են կամ կալուածներ, որ գնել է զանազան ժամանակներում էջմիածնի վանքը այս կամ այն անհատից։

Մեր վանքերը, գրեթէ առանց բացառութեան, սեփական անտեսութիւններ չունեն. մեզ յայտնի չեն դէպքեր, երբ մեր վանքերը իրանց սեփական ոյժերով (անասուններ և մշակներ) մշակէին այս կամ այն կալուածը. ուստի վանքերի կալուածների մեծագոյն մասը տրվում է կապալով զանազան ժամանակներով այս կամ այն անձին, գիւղական հասարակութիւններին առձեռն գումարով կամ որոշ մասով։ Միայն էջմիածնի վանքն է, որ ունէր իր սեփական անտեսութիւնը, ինվենտարը, եզներ, գոմէշներ, ձիեր, ոչխարներ, կովեր և այլն։

Ուրիշ խօսքով՝ վանքապատկան կալուածատիրական տնտեսութեան ողջ սիստեմը պատահական է, անշահաւէտ և վերին աստիճանի աղքատ, եթէ միայն կարելի է այստեղ որ և է սիստեմի մասին խօսել։

Վանքական այն կալուածները, որոնք մօտիկ են այս կամ այն վանքին, կառավարվում են մեծ մասամբ վանահայրերի ձեռքով, պայմանագրերը կապվում են կօնսիստօրիաների, հոգևոր կառավարութիւնների միջոցով կամ թէ՝ տրվում են աճուրդով էջմիածնի սինոդի կողմից։ Վանքապատկան եկամուտների ժողովումը (ցորեն, գարի, խոտ և այլն) յանձնված է երբեմն սինոդի կողմից ուղարկված վարդապետներին—կալաչափերին. դա եկամուտներ ժողովելու ամենախայտառակ ձևն է։ Կռիւներ, աղմուկներ, մտրակներ և խողոք թիւրիմացութիւններ գիւղացիների և վանքի ներկայացուցիչների մէջ անպակաս են, որպէս նաև անպակաս է հացահատիկների գողութիւնը, գիշերով փախցնելը, գաղելը։ Եկամուտների ժողովման այս սիստեմին հետևում է դատաստանական մանր և մեծ պրոցէսների մի խայտառակ շարք։

Վանքական կալուածների կառավարութեան այս անմիտ սիստեմը անհնար է դարձնում որ և է կօնտրոլ երկու կողմից ևս, ուստի և դուռ է բացում զանազան կասկածների և չարագործութիւնների։ Առաջ, քանի դեռ Անդրկովկասում չէր վերջացած ընդհանուր հողաչափութիւն (размежеваніе), վանքապատկան կալուածների սահմանները և տարածութիւնը շատ երերուն էին. քաջ, արի և սրտացաւ էր վանահայրը՝ վանքը տէր էր համարվում իր կալուածքի, հակառակ դէպքում՝ պեղի էին ունենում ահագին զախվատներ—հարևանների կողմից, որոնցից ամենավտանգաւորը եղել է ինքը պետութիւնը (казна) ի դիմաց պետական կալուածների կառավարութեան չինովնիկների։

Հայ վանքական կալուածների տարեգրութեան մէջ անմոռաց և շնորհակալութեան արժանի է հանգուցեալ Պօղոս վարդապետը—Հաղարծնի վանքի վանահայր և այդ անտառների երկարամեայ արթուն, որի կառավարիչը, որի շնորհիւ վանքին հնարաւոր եղաւ հազարաւոր դեսեատին կուսական անտառներ ազատ պահել զանազան յափշտակողներից, սակայն, դժբաղդաբար, Պօղոս վարդապետի նման վանահայրեր և կառավարիչներ մեր վանքերը շատ քիչ են ունեցել և դրա հետեւանքը եղել է այն, որ մեր վանքերը կորցրել են ահագին հողեր շնորհիւ վանահայրերի ոգիտութեան և կալուածների անտէրութեան։ Այժմ, երբ ողջ Անդրկովկասում ընդհանուր հողաչափութիւնը աւարտված է, երբ ամեն ինչ մտել է օրինականութեան սահմանների մէջ—կալուածների կառավարութեան պահպանողական (охранительная) սիստեմը պէտք է տեղի տայ շահագործման (эксплоатаціонный) սիստեմին, իսկ այդ սիստեմը պահանջում է գիտութիւն և դրամագլուխ։ Գիտութիւն՝ կազմակերպական ծրագիրներ կազմելու և դրամագլուխ՝ այդ ծրագիրները փոքր առ փոքր իրագործելու։ Այդ պատասխանատու գործի համար մեր վանահայր-կառավարիչները այլ ևս անպէտք են. դրանք պէտք է տեղի տան գիտութեամբ և փորձառութեամբ օժտված աշխարհական մասնագէտներին, որոնք գործէին որոշ, ուսումնասիրված, հաստատուն ծրագրով։ Իսկ այդ հնարաւոր է միայն այն դէպքում, երբ վանքապատկան ընդարձակ կալուածների կառավարութեան համար կը ստեղծվի մի յատուկ կենտրոնական վարչութիւն իր օժանդակ օրգաններով։

Այդպիսի մի վարչութիւն անհրաժեշտ է, որ հիմնվի էջմիածնում։ Վարչութիւնը կարող է կազմված լինել հինգ անդամներից, որոնցից մէկը նախագահը՝ մի հմուտ, կալուածական գործին ծանօթ հոգևորական անձ, միւսները աշխարհականներ՝ մէկ գիւղատնտես, մէկ անտառապետ, մէկ իրաւաբան և չորրորդը ճարտարապետ։

Էջմիածնի վանքի անտեսութիւնը, որպէս և բազմաթիւ նոր շինութիւնները և վերանորոգութիւնները, Երևանի թեմի դպրոցները և այդ բոլորի իրաւաբանական յարաբերութիւնները այդ մասնագէտների գոյութիւնը էջմիածնում անհրաժեշտ են դարձնում, ուստի ամենայն սիրով և հիմունքով կարելի է տարին—բոլոր օգտվել այդ մասնագէտների ծառայութիւնից. դրանով էջմիածինը և նրա ընդարձակ գործունէութիւնը միայն օգտված կը լինեն։

Կենտրոնական այս վարչութիւնից դուրս Երևանի և Կարսի թեմերի վանքապատկան կալուածքները պահանջում են մի գիւղատնտես մասնագէտ, որպէս նաև Շուշու և Թիֆլիսի թեմը մի անտառապետ մասնագէտ։ Այս երկու թեմական կալուածական վերատեսուչները պարտական են յաճախ շրջել իրանց տեսչութեան տակ գտնված վանքապատկան կալուածքները, ուսումնասիրել և, ըստ կարիքի, այստեղ և այնտեղ ստեղծելով սեփական վանական տնտեսութիւն—ներկայացնել իրանց դիտողութիւնները էջմիածնի կենտրոնական վարչութեանը, որը և քննութեան առնելուց յետոյ կազմակերպական ծրագիրները, նախահաշիւները, կը հաստատէ դրանց և կուղարկէ թեմական վերատեսուչներին ի գործադրութիւն։

Ամենագլխաւորն այն է, որ ողջ գործը լինի կենդանի, հեռու կանցելիարիականութիւնից, որ նա գտնվի հմուտ, շիտակ մարդկանց ձեռքին և որ գործի մէջ չը խառնվեն կողմնակի հրամաններ, անձեր և ինտրիգներ։ Դա կը լինի կենդանի գործի փորված գերեզման։

Մենք հաւատացած ենք, որ վանքապատկան կալուածքների շահագործութեան և կառավարութեան այսօրինակ կազմակերպութիւնը անպայման կը բարձրացնէ էջմիածնի եկամուտները, և միւս կողմից հայ հասարակութիւնը կը վերադարձնէ էջմիածնին այն հաւատն ու վստահութիւնը, որը վերջին 30 տարիների մէջ օրաւուր պակասում էր։

Թող օգտվի էջմիածինը հայ ժողովրդի մէջ վերջին դժբաղդ երկու տարիների ընթացքում առաջացած սիրուց և համակրանքից, թող իր կենդանի գործունէութեամբ շահագործէ այդ սէրը յօգուտ իրան և ընդհանրութեան շահերի։ Դա կը լինի էջմիածնի բարոյական վերածնութեան դարեգլուխը։

Միշտ ժողովրդի հետ, նրա աջակցութեամբ և ոչինչ առանց նրա։ Սա թող լինի էջմիածնի ապագայի նշանաբանը։

Վանքապատկան կալուածների կառավարութեան առիթով իմ այս մի քանի դիտողութիւնները թող ծառայեն որպէս ստուերագծեր մի ուրիշ, աւելի լայն, աւելի կատարեալ ծրագրի համար։

Որ այդպիսի մի ծրագրի պէտք կայ—դա անկասկած է։

Գիւղատնտես Ա. Աթանասեան

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

—

Օգոստոսի 23-ին

Դարձեալ կոտորած... Դարձեալ անմեղ ու ապարդիւն արիւնով ներկվեցին Բագուի փողոցները, դարձեալ հարիւրաւոր զոհեր տուեց համաշխարհային արդիւնաշահ Բագու քաղաքը։ Տէր Աստուած, այս բոլորը ինչո՞ւ համար է, ինչ նպատակ թէ բարոյական շահ դրանից հային կամ Թուրքին։ Մթթէ մօտ անցեալի դառն փորձը իրատական չեղաւ խռովարարների համար։ Թէ այն անկեղծ խոստովանութիւնները, հրապարակական երդումները, լալով զղջումն հայոց եկեղեցում ու թիւրքաց մզկիթում, այն բոլորը, որոնք անկեղծ խոստովանութեան ու բարի ձգտումների արտայայտութիւն էին համարվում, իրօք ոչ այլ ինչ էին, եթէ ոչ խաբէութիւն ու աչքակապութիւն։ Դիտէք, ընթերցող, մենք՝ բագուցիներս անընդունակ ենք դարձել կանոնաւոր մտածելու, դատելու և հիմնվելով կատարված ու կատարվող դէպքերի վրա՝ այս կամ այն ուղիղ տրամաբանական եզրակացութեան յանգելու։ Մարդու արիւնը սառչում է երակներում, ուղեղը թմրում, ուղղակի ապուշ է դառնում, երբ ջանք է գործ դնում այսպէս կամ այնպէս բացատրելու։

Մի բան միայն պարզ է մեզ համար, որ փետրվարեան արիւնոտ օրերից յետոյ Բագուի Թուրքերը ուղղակի անտանելի էին դարձել։ Նրանց հետ, ինչպէս ասում են, խօսել չէր լինում։ Թէ շուկայում, թէ փողոցում, թէ զբօսավայրերում և թէ մանր մունր խանութներում նրանք իրանց այնպէս անպատկառ ու անվայել էին պահում, որ եթէ մի փոքր անզգուշութիւն անէիր նկատել, ցինիկական դարձուածների ու փողոցային հայհոյանքների այնպիսի մի շարան կը թափվէր գլխիդ, որ եթէ փորձ փորձէիր կարգի հրաւիրելու կամ պատիւ պահանջելու, այն ժամանակ չայէխանաների կրթարանից դուրս եկած փողոցի հերոսը խօսքից իսկոյն գործի կը դառնար—դաշոյն կամ ատրճանակ մէջ տեղ կը դար։ Տեսնելով ու շարունակ լսելով այս բոլորի մասին, ակամայից ինքդ քեզ հարց էիր տալիս, թէ այս բոլորը մեզ ո՞ւր պիտի տանեն, սրա վերջն ի՞նչ պիտի լինի։ Կարող է այս դրութիւնը երկար շարունակվել առանց վտանգի։ Շարունակ մտածողութեանդ առարկան այդ սպառնացող վտանգն էր, որը Դաժկլեան սրի նման կախվել էր թէ Բագու քաղաքի և թէ նաւթահանքերի հայ ազգաբնակութեան գլխին։ Ինչեր ասես տեղի չունեցան փետրվարի արիւնոտ դէպքերից յետոյ թէ քաղաքում և թէ նաւթահանքերում։ Քաղաքային վարչութեան խորհրդարանում փողոցային Թուրք սրիկաների ձեռքով ծառայողներին ծեծի ենթարկելը, զինված խմբերով նաւթահանքերում շրջակայքն ու սրան կամ նրան մահվան սպառնալիք կարդալը, վերջապէս օրը ցերեկով դեմօնստրացիա կերպով սպանութիւններ կատարելը, այս բոլորը գալիս էին մի աւելորդ անգամ ապացուցելու, որ այս դրութիւնը երկար շարունակվել չէ կարող։ Եւ ահա այդ չարագուշակ նախազգացումն իրականացաւ ու հազիւ մի փոքր կենդանացած Բագուն նորից մեռելութեան մատնվեց։

Շաբաթ, ամսոյ 20-ին, երեկոյեան ժամը 5-ին մի այնպիսի փոթորիկ բարձրացաւ քաղաքում, որ Բագուն նորից դժոխքի փոխարինվեց։ Ամեն կողմից հրացանի ու ատրճանակի որոտումն էր միայն լսվում։ Ամեն ոք փողոցներից փախչում էր մի կերպ պատսպարվելու։ Խանութները իրարանցումով փակվում էին, որն էլ կիսաբաց թողնում փախչում։ Անմտութիւն կը լինէր տուն հասնելու մասին մտածել։ Ով որտեղ պատահեց ծուարում էր։ Աղմուկն սկսվելուն պէս իսկոյն գեներալ-նահանգապետի կարգադրութեամբ զօրքը բռնում է քաղաքի փողոցները ու ձեռնամուխ լինում կարգը վերականգնելու, իսկ անհնազանդներին զէնքի ուժով խաղաղացնելու։ Այսպէս սկսվեց օգոստոսի 20-ի դէպքը։ Թէ ինչից առաջացաւ և առիթն ի՞նչ է, յայտնի չէ։ Զանազան տեսակ են պատմում, որոնք ստուգութեան կարօտ են։ Հարկաւ, անաչառ քննութիւնը կը պարզէ։ Դէպքը սկսվեց, շարունակվեց հրացանաձգութիւնը ամբողջ գիշերը, միւս օրը, իսկ 21-ին երեկոյեան ու գիշերը շատ ուժեղ հրացանաձգութիւն էր կատարվում։ Ասում են, որ շրջակայ գիւղերից զինված խմբեր ուզեցել են քաղաք մտնել, սակայն քաղաքի ծայրերում դրված զինուորական պահակախմբերը թոյլ չեն տուել, որի համար էլ հրացանաձգութիւն է եղել զինուորների ու զինված Թուրքերի միջև։

Այսօր համեմատաբար շատ հանգիստ է, թէև ամբողջ քաղաքը մեռած է, կեանքը դադարել է, խանութներն ու գրասենեակները փակ են։ Շուկան առաւօտները կիսով չափ բացվում է և ապա փակվում։ Այսօր Բալախանի նաւթահանքերում է սկսվել անկարգութիւնը։ Հրդեհված են նաւթահորեր։ Այսօր երեկոյեան ժամի 7-ի մօտերը սկսվեց վառվել Սև քաղաքին կից Քիշլի Թուրք գիւղի մօտ գտնվող նաւթի ամբարները։ Հրդեհները սարսափելի կը դարձնեն հանքերի հայ ազգաբնակութեան դրութիւնը։ Բալախանի օժանդակ զօրք է ուղարկված։ Այս մասին մանրամասնութիւնները յետոյ։ Պէտք է խոստովանած, որ գեներալ-նահանգապետը շատ եռանդուն միջոցներ է ձեռք առել անկարգութիւնները վերջացնելու։ Այս անգամ զօրքը իր կոչման բարձրութեան վրա է կանգնած։ Շնորհիւ այս հանգամանքի քաղաքում անպատիժ, ակնյայտնի թալան ու հրդեհներ չը կան։ Իսկ թէ ինչ վիճակի են թրքական թաղերում ապրող սակաւաթիւ հայ ընտանիքները, յայտնի չէ։ Թէև զինուորների ուղեկցութեամբ եղածները նորից գաղթում են դէպի քաղաքի կենտրոնը—հայաշատ մասը։ Թէ ինչպէս է սկսվել և ո՞վքեր են ըսկսել, թերևս դէպքի սկսուածքը լուսաբանելու համար հետաքրքիր լինի հետևեալ պատմութիւնը, որը ես այսօր լսեցի իմ բնակարանին կից նոր շինվող մի Թուրքի տան գիշերապահից։ Նա պատմեց ինձ հետևեալը։—Մեր շինութեան Թուրք տէրը մի քանի օր սրանից առաջ ասաց որմնադիրներին, որ լաւ կը լինի, եթէ մի երկու օր դադարէք աշխատել, որովհետև անկարգութիւններ պիտի լինեն։ Նոյն Թուրք գիշերապահը պատմեց, որ մի քանի օր առաջ իբր թէ Թուրք մեծատունները գնացել են նահանգապետի մօտ ու յայտնել, որ մեր ղօշիքաշիներին այլ ևս զսպել անկարող ենք, նրանք ուզում են անպատճառ «բունթ» սարքել։ Դրանց նահանգապետը պատասխանել է, որ եթէ չեն ուզում հանգիստ մնալ, թող սարքէզ դան, նրանց ես կը զսպեմ։

Շատ հետաքրքիր է այս բոլոր խօսակցութիւնները ստուգել։ Փակված լինելու պատճառով, ստացածս տեղեկութիւնները թերի են և ստուգութեան կարօտ։ Բալախանի չորս կողմից նաւթահանքերը հրդեհված են։ Այրվում է նաև Բիբի-Էյբաթը։ Մի խօսքով կատարեալ դժոխք է դարձել Բագուն իր շրջակայքով։ Ինչով պիտի վերջանայ այս բոլորը՝ յայտնի չէ։ Այս բոպէիս լուր առայ, որ մի քանի հայի տներ ու խանութներ թալանված են ու բնակիչներին սրի են անցրել Շամախինկա կոչված թրքական թաղում։ Թալանված է նաև քաղաքային վարչութեան անդամ Զուլշուդ Յարութիւնեանի բնակարանը։ Ինքը ընտանիքով բացակայ է քաղաքից։ Տան ծառայողների վիճակը յայտնի չէ։

Այսօր առաւօտեան Շամախինկայում հրացանաձգութիւն էր։ Բալախանիում, բացի հրդեհներից, նաև քանդված է Զուղուլբայի Ջրմուղի ճանապարհը, որով խմելու ջուր է մատակարարվում։ Դրութիւնը կրիտիկական է։ Առաւել եռանդուն միջոցներ են պէտք խաղաղութիւնը վերականգնելու։ Դարձեալ կրկնում ենք, որ գեներալ-նահանգապետ Ֆադդէեվ շատ կարուկ ու անաչառ միջոցներ է ձեռք առել կարգը վերականգնելու։

Երէկ հրաւիրված են եղել գեներալ-նահանգապետի թէ հայ և թէ Թուրք ազգաբնակութեան ներկայացուցիչները խորհրդակցելու

խաղաղութիւնը վերականգնելու համար։ Ժողովը ոչ մի եզրակացութեան չէ յանգել։ Թուրքերը ամէն միջոց գործ են դնում մեղքը հայերի վրայ փաթաթելու, իսկ հայերը պընդում են հակառակը։ Ո՞ւր են ժողովրդի սրբոտացաւ կեղծ բարեկամները, ո՞ւր են կոկորդիլոսի արցունք թափող աչքակապները։ Ինչու՞ չեն իրանց հեղինակաւոր ձայնը բարձրացնում։ Չէ՞ որ ահա երրորդ օրն է, որ հրացանաձգութիւնը կենտրօնացած է քաղաքի ծայրերում, թրքական մասերում, որտեղ սպանված են նաև զինւորներ։ Կեղծաւորութիւնը, խաբէութիւնը, երկու հարևան ազգերի խաղաղ ապրելու ջատագով ձևանալը մի օր պիտի երևան ելնէին։ Այնպէս շարունակվել չէր կարող։ Կարծում եմ, որ Բագուի այս երկրորդ դէպքը շատ բան պիտի պարզէ։

Ար. Առաքելեան

ՆԱՄԱԿ ՆՈՒԽՈՒՑ

Օգոստոսի 21-ին

Անցեալ նամակում յիշել էի, որ այստեղի հայ-թրքական թշնամութեան վտանգի կէսը անցած կարելի էր համարել, եթէ անցած ուրբաթ օրը խաղաղ անցնէր։ Բարեբախտաբար ուրբաթ օրը խաղաղ անցաւ, և լարված մթնոլորտը բաւականին հանգստացան։

Այդ օրը վաղ առաւօտվանից քաղաքի յայտնի փողոցներում դրված էին զօրքից և ստրաժնիկներից պատրուլներ։ Քաղաքը շատ ճնշող տպաւորութիւն էր թողնում։ Գաւառապետի այդ կարգադրութիւնը շատ վատ ազդեց թուրքերի վրա։ Նրանք սկսեցին բողոքել, թէ մեզանից ինչ վատ վարմունք է տեսել, որ պ. գաւառապետը այդպիսի միջոցներ է ձեռք առնում, կամ թէ չէ մենք ամենևին այդպիսի մտիք չունենք։ Եղած թիւրիմացութիւնը մենք մեր ձեռքով կը վերջացնենք, ինչպէս արինք Տէր-Գէորգեանների գործարանում։ Բայց և այնպէս պատրուլը մնաց մինչև երեկոյ և այդպիսով ուրբաթ օրը խաղաղ անցաւ։

Ի նկատի ունենալով քաղաքում պատվող թեր և դէմ խօսակցութիւնները, պ. գաւառապետը իր տրամադրութեան տակ վերցրեց տեղական բերդից 80 զինւոր և մի և նոյն ժամանակ մտադրվեց Գանձակից զինւոր կամ կօզակ բերել տալ քաղաքի պաշտպանութեան համար։ Այդ պատճառով շաբաթ օրը, կէսօրին, իր մօտ հաւաքեց քաղաքի բոլոր աչքի ընկնող թուրքերին ու հայերին ու հարցրեց նրանց տրամադրութիւնը այդ հարցի վերաբերեալ։ Թուրքերը միաբերան պնդեցին, թէ տիւնները և թէ շիաները, որ մեր քաղաքում ոչինչ լինել չէ կարող, մենք պատասխանատու ենք։ Նուիրին մինչև այժմ վերջին եղբայրասպան կռուորածի մէջ պատւաւոր տեղ է բռնել և այսուհետև էլ նա նոյն տեղը պիտի բռնէ, որ մենք յանձն ենք առնում քաղաքի պաշտպանութեան գործը, մեր քաղաքի խաղաղութեամբ ուղում ենք մենք պարծեցած լինել Կովկասի միւս քաղաքների առաջ. պարծանքը թող պոլիցիան իրան չը վերագրէ, մեզ զօրք հարկաւոր չէ։

Հայերին այլ ևս ասելու բան չէր մնում, ուստի համաձայնվեցին։ Այնուհետև 2-ական դուրլի փող հաւաքեցին մի բարեկամական խնճոյքով յաւերժացնելու թուրք-հայկական համերաշխութիւնը։ Մեզ մնում է միայն հաւատալ մեր թուրք քաղաքացիների որոշմանը, և ցանկանալ, որ այդ համերաշխութիւնը ոչ մի խոչընդոտի չը հանդիպէ և ապագայում, ինչպէս եղել է այդ մինչև այժմ։

Նոր արտայայտութիւններ թշնամական յարաբերութիւնների հայերի և թուրքերի մէջ տեղի չեն ունեցել։

Երբեմն թւում է, որ բորբոքված կիրքը կարող է մի փոքր էլ հանգստանալ, որ այն զգաստ մարդիկ, որոնք իրար արեամբ ձեռքեր են լուանում, եթէ ուզենան, կարող են միմեանց լսել, հասկանալ և զգալ, երբ գլխով անցնում է փոխադարձ բարբարոսութիւնների հեռանկարը։

Կ. Հզօրեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Այս տարի Թիֆլիսի նորակոչների ցուցակում կայ 613 մարդ որոնցից 370-ը տեղացիներ են։ Դրանցից քրիստոնեաներն 583 հոգի են, հրէաները 14, մահմեդականները 3 և 13 հոգի աղանդաւորներ։

—

«Бирж. Вѣд.» լրագրին հաղորդում են, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսի մտադրված ուղևորութիւնը Պետերբուրգ տեղի չէ ունենալու, որովհետև Կաթողիկոսը ցանկանում է Կովկասում և Անդրկովկասում երկարատև շրջագայութեան դուրս գալ։

—

Ստացանք յօգուտ Ղևասված շուշեցի հայերի 1) բժշկապետ Գասպարեանից 100 ր., 2) տիկին Մարիամ Մելիք-Հայկազեանից 14 ր. 65 կ. ծանօթների շրջանում հաւաքած։ Ընդամենը 114 ր. 65 կ.։

—

Երէկ, լոյս 25-ի գիշերը, Թիֆլիսից 15 վերստ հեռաւորութեան վրա Վլադիկավկազի ճանապարհին, անյայտ չարագործներ յարձակվել են երկու կօզակների վրա, որոնք ուղեկցում էին Փոխարքայի իրերին դէպի Կիսլովոդսկ։ Կօզակներից մէկը սպանված է, միւսը վիրաւորված։

—

Նախիջևանի ազգի զոհերի օգտին ստացանք՝ 1) Քէշիշքեանդի գիւղի հասարակութիւնից Արտ. Միրզոյեանի ձեռքով հաւաքած 8 ր. 70 կ., 2) Բագուից Տիգ. Նազարեանի ձեռքով հաւաքած 25 ր., 3) Պետերբուրգից դերասան Ա. Յարութիւնեանի ձեռքով հաւաքած 6 ր. 15 կ., 4) Կրասնօվոդսկից Զ. Ալէքսանեանի ձեռքով մի խնջոյքում հաւաքած 10 ր. 42 կ., 5) Մերվից մի ոմն 10 ր., 6) Բագուից Միլիտինեան փողոց, մանուֆակտուրային պահեստում գտնվող մի շարք գործակատարներից Յովակիմ Մելքումեանի ձեռքով հաւաքած 20 ր. 50 կ.։ Ընդհանուր գումարը նախկին ստացածների հետ միասին 252,90 ր. 83 կ.։

—

Բագուի շոգենաւային «Кавказъ и Меркурій» ընկերութեան ապրանքային պահեստում օգոստոսի 8-ին նաւահանգստի պրիստաւը կասկածելով՝ ձերբակալել է 4 արկղ ապրանք։ Բաց անելով արկղները, գտել են նրանց մէջ 7000 փամփուշտ 4—2 կալիբրանի հրացանի համար։ Քննութիւնը պարզել է, որ այդ ապրանքը պէտք է ստանար Շամախու ընակիչ Ալի-Սաֆտար-Հաջի-Սամէդ-օղլի Հախվերդովը։ Արձանագրութիւն է կազմված այդ անձին դատի ենթարկելու համար, իսկ փամփուշտները ուղարկված են Սալիանի գնդի պահեստատունը։

—

Կովկասի գլխաւոր վարչութիւնը թոյլատրել է կրկին բաց անել Գանձակի գաւառի Ելենենդորֆ գերմանական գիւղի գրադարանը, որ 1899 թ.-ին փակել էր Կովկասի նախկին վարչութիւնը։

—

Թիֆլիսի գաւառապետը դիմել է նահանգապետին և խնդրել, որ Տաննէնբերգ պրիստաւի տրամադրութեան տակ դրվի 20 կազակ, որովհետև ոստիկանութիւնն զբաղված է Մանգլիսի պօստի վրա յարձակվող աւազակներին ձերբակալելու գործով և ժամանակ չունի հրսկելու Մանգլիսից մինչև Բելի-Կլիչ և մինչև Թիֆլիս ճանապարհների վրա։ Այն ինչ այժմ ամարանոց գնացածները վերադառնում են և աւազակութիւնները կարող են բազմանալ մի և նոյն ժամանակ և եայլաղաւոր թուրքերն սկսել են սարերից վայր իջնել, իսկ դա արդէն բաւական է սարսափահար անելու համար բոլոր շրջապատ քրիստոնեայ ազգաբնակութիւնը։ Արդէն, ասում է գաւառապետն իր թղթում, Կօջորի ամարանոցաւորների մէջ սարսափ է տարածվել, որովհետև լուր են առել, որ թուրքերը յարձակվելու են Կօջորի վրա։

—

Լուր է պատում, որ ֆինանսների մինիստրը, Բագու քաղաքը և Բագուի նահանգը քննող սենատոր Կուզմինսկուց տեղեկութիւններ ստանալով նաւթային գործի դրութեան մասին այդ նահանգում, կարգադրութիւն արեց մի քանի գեղծումների մասին խիստ քննութիւն կատարել տեղի վրա այդ շրջանում։ Առանձին ուշադրութիւն կը դարձվի Բաքանիի լճի շահագործման կարգի վրա։ Քննութիւնը կը կատարէ առանձին յանձնաժողովը։

—

Պետերբուրգի քաղաքային դուման որոշել է հետևեալ կերպով դիմաւորել պարսից Շահին։ Բարձր հիւրին, Պետերբուրգ ժամանելիս, կայարանում կը դիմաւորէ մի պատգամաւորութիւն, բաղկացած քաղաքագլխի պաշտօնակատարից, նրա օգնականից և վարչութեան մի անդամից։ Քաղաքագլուխը կը մատուցանէ աղ ու հաց։

—

«Neue Freie Presse» լրագրին հեռագրում են Պետերբուրգից. «Խաղաղութեան դաշն կապելու լուրը ստանալուն պէս՝ անմիջապէս Պետերբուրգ կանչվեց Կ. Պ. Պօբէդոնոսցէվը։

—

Պետերբուրգի ուսումնարանական շրջանի հոգաբարձուն հետևեալ շրջաբերական ծանուցումն է ստացել ժողովրդական լուսաւորութեան մինիստրից. «Թագաւոր Կայսրը իմ ամենահպատակ զեկուցումից յետոյ օգոստոսի 7-ին բարձրագոյն հրամայել բարեհաճեց, որ Հեռաւոր Արևելքում պատերազմական գործողութիւնների բեմի վրա ծառայողների երեխաները ընդունվեն առանց դաւանութեան խտրութեան կօնկուրսից դուրս բոլոր միջնակարգ դպրոցները, միայն սահմանված քննութիւնը տալուց յետոյ։

—

Թիֆլիսի նահանգապետը հրամայել է Մանգլիս գնացող-եկող պօստային կառքի հետ մի ստրաժնիկ ևս աւելացնել, որպէս զի կողոպտիչները չը համարձակվեն նորից փորձ անելու պօստի դէմ։

—

Թիֆլիսի ժամանակաւոր զինւորական նահանգապետը թոյլ է տուել հրաւիրելու երէկ երեկոյեան համար Դուժայի երկրորդ արտակարգ նիստ Կովկասում զեմստվային հաստատութիւններ ներմուծելու խնդրի առիթով։ Միայն զինուորական նահանգապետը պայման է դրել, որ քաղաքագլուխը երաշխաւորէ ժողովի ժամանակ հանդիսականների կողմից կարգի պահպանում։ Միայն այդ պայմանով թոյլատրված է անել նիստը դռնբաց։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՍՏԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

25 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գլխաւոր զինւորական դատարանի որոշմամբ, մահվան պատիժը կախաղանի միջոցով, որին դատապարտել էր ժամանակաւոր զինւորական դատարանը Քութայիսի գիւղացի Կվայչաձէին մայիսի 7-ին Բաթումում մի քանի անյայտ անձանց հետ Սօղոյեանի մագազինի և խանութի գործակատարի վրա զինաւորված յարձակման համար, փոխարինվեց ցմահ տաժանակիր աշխատանքներով։

«Слово» լրագիրը հրատարակեց ռուս-եապօնական դաշնագրի հետևեալ բնագիրը. «Հայտնի է Ռուսաստանի Կայսրը եւ Եապօնիայի կայսրը, դրդված պատերազմին վերջ դնելու ցանկութեամբ, նշանակեցին իրանց լիազօրները ներքին համաձայնութեան գալու համար խաղաղութեան դաշնագրի պայմանների վերաբերմամբ։ Լիազօրները, հաւաքվելով Պօրտսմուտում սահմանեցին հետևեալ պայմանները։ Առաջին յօդուածը որոշում է խաղաղութեան և բարեկամութեան վերականգնումը Ռուսաստանի և Եապօնիայի պետութիւնների թագաւորների, երկիրների և հպատակների միջև։ Երկրորդ յօդուածում։ Ռուսաստանը ճանաչում է Եապօնիայի քաղաքական, պատերազմական և տնտեսական շահերի գերակշռութիւնը Կորէայում և խոչնդոտ չի դառնայ այն միջոցներին, որ Եապօնիան, կօրէական կառավարութեան հետ համաձայնութիւն կայացնելուց յետոյ հարկաւոր կը համարէ ձեռք առնել Կորէայում. ռուս հպատակները և նրանց ձեռնարկութիւնները Կորէայում կը վայելեն նոյն դրութիւնը, ինչ դրութիւն որ ունեն ուրիշ պետութիւնների հպատակները և ձեռնարկութիւնները։ Յօդուածում երրորդ։ Ռուս-եապօնական զօրքերի հեռանալը Մանջուրիայից տեղի կունենայ միաժամանակ, այնպէս որ երկու երկիրները այդ հեռանալու վերաբերմամբ համանման դիրք կը բռնեն։ Անխախտ են մնում մասնաւոր անձանց և ընկերութիւնների ձեռք բերած իրաւունքները Մանջուրիայի մարզվող տեղերում։ Ընկերութիւնների իրաւունքները և ռուսաց կառավարութեան իրաւունքները Պօրտ-Արտուրի և Տալիէնվանի և նրանց կից հողերի և ջրերի վրա ունեցած կապալային պայմանագրով անցնում են կատարելապէս Եապօնիային, իսկ ռուսների գոյքը և իրաւունքները անձեռնմխելի են մնում։ Հինգերորդ յօդուածում։ Ռուսաստանը և Եապօնիան փոխադարձաբար պարտաւորվում են ոչինչ խոչընդոտ չը դնել բոլոր ընդհանուր և բոլոր ժողովուրդների վրա տարածվող միջոցների առաջ, որ Չինաստանը կը ցանկանայ ձեռք առնել առևտուրը և արդիւնաբերութիւնը զարգացնելու նպատակով Մանջուրիայում։ Յօդուածում վեցերորդ։ Մանջուրական երկաթուղին բաժանվում է Ռուսաստանի և Եապօնիայի միջև Կուանչէնցզիում։ Նրա երկու կէսերն ևս կը շահագործվեն միայն առևտրի և արդիւնաբերութեան նպատակով, սակայն Ռուսաստանը պահպանում է իր հաշվին իր մասում այն բոլոր իրաւունքները, որ ձեռք են բերված Չինաստանի հետ կապած դաշնագրով արևելեան-չինական երկաթուղին կառուցանելու մասին։ Եապօնիան ձեռք է բերում ածխահանքեր, որոնք անհրաժեշտ են նրա երկաթուղիական մասի պէտքերը հոգալուն, բայց մասնաւոր անձանց կամ մասնաւոր ձեռնարկութիւնների իրաւունքները չեն խախտվի։ Երկաթուղու երկու կէսերի վարչութիւնները վայելում են կատարեալ ազատութիւն ձեռնարկել բոլորը, ինչ որ կը ցանկան իրանց յատկացրված շրջանում։ Եօթերորդ յօդուածում։ Ռուսաստանը և Եապօնիան պարտաւորվում են միացնել Կուանչէնդզիում իրանց տիրապետութեան տակ գտնվող արևելեան-չինական երկաթուղու հատուածները։ Յօդուածում ութերորդ։ Արևելեան-չինական երկաթուղու մասերը Մանջուրիայում պէտք է անարգել շահագործվեն Մանջուրիայի երկու մասերի մէջ առևտրական շարժման նպատակով։ Յօդուածում իններորդ։ Ռուսաստանը զիջում է Եապօնիային Սախալին կղզու հարաւային մասը մինչև 50 աստիճան հիւսիսային լայնութեան նրան կից կղզիներով։ Լապերուզեան և Թաթարեան ջրանցքներում ազատ լողալու իրաւունքը ապահովում է եապօնական կառավարութիւնը։ Յօդուածում տասներորդ։ Սախալինի հարաւային մասի ազատ ռուս աքսորականները կարող են մնալ այնտեղ առանց փոխելու հպատակութիւնը և պահպանելով իրանց բոլոր իրաւունքները կամ, ըստ ցանկութեան, գաղթել, իսկ դրա հակառակ տաժանակիր աշխատանքներին դատապարտվածներին եապօնական կառավարութիւնը կարող է պարտաւորեցնել հեռանալ զիջած շրջանից։ Յօդուածում տասնմէկերորդ։ Ռուսաստանը պարտաւորվում է համաձայնութիւն կայացնել Եապօնիայի հետ եապօնական հպատակների իրաւունքների վերաբերմամբ ձուկ որսալու համար Եապօնական, Օխոտեան և Բերինգեան ծովերի ռուսական ցամաքային ջրերում։ Յօդուածում տասներկուերորդ։ Երկու բարձր դաշնադիր կողմերը պարտաւորվում են վերանորոգել մինչև պատերազմը գոյութիւն ունեցող առևտրական դաշնագիրը, փոքր փոփոխութիւններով մասնրամասնութիւնների մէջ, և աւելի արտօնեալ պետութեան իրաւունքներ տալու պայմանով։ Ռուսաստանը և Եապօնիան պարտաւորվում են փոխադարձաբար վերադարձնել պատերազմական գերիներին, հատուցանելով նրանց ապրուստի իսկական ծախսերը, արդարացուցիչ դօկումենտների հիման վրա։ Տասնչորսերորդ յօդուածում։ Խաղաղութեան դաշնագիրը գրվելու է երկու լեզուով—ֆրանսերէն և անգլիերէն. ֆրանսիականը կը լինի Ռուսաստանի համար, իսկ անգլիերէնը Եապօնիայի համար։ Թիւրիմացութիւնների դէպքում, իսկականը համարվելու է ֆրանսերէնը։ 15-դ յօդուածում։ Դաշնագիրը հաստատելու են երկու կողմի թագաւորները 50 օրվայ ընթացքում, դաշնագիրը ստորագրելու օրից սկսած։ Ֆրանսիական և ամերիկական դեսպանութիւնները կը ծառայեն իբրև միջնորդ ռուսական և եապօնական կառավարութիւնների միջև դաշնագրի հաստատութեան վերաբերմամբ։ Լրացուցիչ յօդուածներ։ 1) յօդուածում։ Մանջուրիայից զօրքերի փոխադարձ հեռացումը պէտք է տեղի ունենայ 18 ամսվայ ընթացքում։ Այդ ժամանակն անցնելուց յետոյ երկու կողմն էլ իրաւունք ունեն ունենալու միմիայն 15 մարդ իւրաքանչիւր վերստ երկաթուղու վրա, իբրև երկաթուղու պահապաններ։ Մանջուրիան զօրքերից մաքրելու ժամանակամասնութիւնները մշակելու են երկու կողմի գլխաւոր հրամանատարները։ 2) յօդուածում. Սախալինում ռուսական և եապօնական տիրապետութեան սահմանները վերջնականապէս կորոշէ մի յատուկ յանձնաժողով։

Գործակալութեան ծանօթութիւն։ Լուրերին նայելով, այս բնագիրը վաղը առաւօտեան պաշտօնապէս հրատարակվելու է։ Եթէ շեղումներ լինեն, իսկոյն կը հաղորդվի հեռագրով։

ՄՕՍԿՎԱ, 24 օգոստոսի։ Դատաստանական պալատում սկսվեց գեներալ Տրէպովի դէմ սպանութեան գործի դռնբաց քննութիւնը։ Մեղադրվողները երկու են—չինովնիկի որդի Գոլտսօրացկի և պատւաւոր քաղաքացու որդի Վոլկով։ Նախագահի սովորական հարցերին Գոլտսօրացկին պատասխանեց, որ մի հարցի չէ պատասխանելու, դատարանի հետ չէ ուզում ոչ մի գործ ունենալ և հրաժարվում է պաշտպանութիւնից։ Վկայ գեներալ Տրեպովը ցանկացել է հարց ու փորձի ենթարկվել իր տանը. նրան կը հարցաքննէ Պետերբուրգի դատաստանական պալատը։ Գործը յետաձգված է։

ՕԴԵՍՍԱ, 24 օգոստոսի։ Սկսվեցին գործո-

զութիւններ Վլադիվոստոկ ապրանքներ և մարդիկ ուղարկելու համար։

ՊՕՐՏՍՄՈՒՏ, 24 օգոստոսի։ Խաղաղութեան դաշն ստորագրելուն ներկայ էին բոլոր պատգամաւորները։ Ռուսները եկան ժամանակին, եապոնացիները ուշացան 1/4 ժամ։ Բարեներից յետոյ բոլորը մտան կոնֆերէնցիայի դահլիճը, ուր տեղի ունեցաւ արձանագրութեան ընթերցումը և դոկումէնտի ստորագրումը։ Թղթանոթի 19 հարուածը յայտարարեց կատարված դէպքը։ Դաշնագիրը ստորագրելուց յետոյ Բօղէնը անգլիերէն լեզուով դիմեց Տակախիրային և շնորհաւորեց Վիտտէի անունից։ Յետոյ շամպայն բերեց և բաժակները բարձրացրին հաստատուն խաղաղութեան համար։ Եապոնացիները 2000 ֆունտ ստէրլինգ նուիրեցին Նիւ-Հէմշիրի աղքատներին բաժանելու համար։ Այսօր եապոնական պատուիրակները կը մեկնեն Նիւ-Եորկ։ Այսօր մեկնում են Նիւ-Եորկ ռուսական լիազօրները էլ։

25 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Բարձրագոյն ըէսկրիպտ Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաևիչի անունով. «Ձերդ Կայսերական բարձրութիւն, Իմ արժանայիշատակ Պապի վստահութեամբ դուք 1862 թուին կանչվեցիք Կովկասի Փոխարքայի և կովկասեան զօրքի գլխաւոր հրամանատարի նշանաւոր պետական պաշտօնը գրաւելու համար։ Առանձին յարգանքով վերաբերվելով ձեր բազմամեայ աշխատանքներին և լուսաւոր գործունէութեանը Կովկասում Իմ ի տէր հանդուցեալ Ծնողը իր թագաւորութեան հէնց առաջին օրերում կանչեց ձեզ իր մօտ մերձագոյն աշխատակցութեան համար պետական բարձր գործերում, նշանակելով ձեզ 1881 թուին Պետական Խորհրդի նախագահ։ Քան և չորս տարվայ ընթացքում դուք անխոնջ եռանդով Իմ Ծնողին և Ինձ ցոյց էիք վերին աստիճանի օգտակար աջակցութիւն օրէնսդրութեան և ծայրագոյն վարչութեան նշանաւորագոյն խնդիրները լուծելու մէջ։ Մի այդքան արդիւնաւէտ միանութիւնը նախագահի պաշտօնում միակ օրինակն է Պետական Խորհրդի պատմութեան մէջ։ Ձեր անխոնջ աշխատանքներց անձնուրութիւնը ձեզ վստահացած գործին և բարեցակամ անկողմնապահութիւնը խորհրդի գատողութիւններին ուղղութիւն տալու մէջ միշտ նպաստում էին օրէնսդրական նախագծումների բազմակողմանի մշակութեանը։ Մի և նոյն ժամանակ ձեր ջերմ վերաբերմունքը դէպի խորհրդի իւրաքանչիւր անդամի վիճակը յաջողդաբար վաստակել է տուել ձեզ նրա ամբողջ կազմի օրհնեալ սէրը։ Այժմ յօդնածութիւնը աշխատանքներից և հիւանդոտ դրութիւնը դրդեցին մի քնորդել նախագահի պաշտօնից արձակելու մասին։ Սրտագին ցաւակցութեամբ դիմանելով ձեր յամախակի խնդիրներին, ես հոգեկան պահանջ եմ զգում կրկին անգամ յայտնել ձեզ, որ բարձր էր գնահատվում ձեր գործունէութիւնը, այդ նպատակով ձեր կապը խզելու համար այն պաշտօնից, որին դուք ամենաքիչը նուիրեցիք կէս դար, ես Պետական Խորհրդին տուած այս թուի ուկազով նշանակեցի ձեզ նրա պատուաւոր նախագահ։ Սրտերում եմ Բարձրեալին թող երկարացնէ նա ձեր տարիները, պարգևելով ձեզ արժանավայել հանգստութեան պայծառ օրեր Թագաւոր Կայսրի և Ռուսաստանի առաջ սրբութեամբ կատարված պարտքի ուրախարար գիտակցութեան մէջ։ Իսկականի վրա Նորին Մեծութեան Սեփական ձեռքով ստորագրված է «Ձեզ սրտագին սիրող և շնորհակալ ՆԻԿՕԼԱՅ»։ Պետերհոֆ, 1905 թուի օգոստոսի 24-ին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ «Новое Время»-ն հաղորդում է, որ ներքին գործերի մինիստրութեան մէջ աւարտվում է նոր կանոնների մշակումը, որոնք վերաբերվում են Բալտիական նահանգներից Պետական Դումայի անդամ ընտրելուն։ Բոլոր այն նիւթերը, որոնք անհրաժեշտ են բարձր աստիճանաւորներից կազմած խորհրդակցութեան՝ Պետական Դումայի մասին լրացուցիչ կանոններ քննելու համար ներքին գործերի մինիստրը կը ներկայացնէ սեպտեմբերի 10-ից ոչ ուշ։ Դրանից յետոյ քննութեան համար հարկաւոր կը լինի էլի ոչ աւել քան չորս նիստեր։ Այդպիսով խորհրդակցութեան բոլոր աշխատութիւնները պատրաստ կը լինեն մինչև հոկտեմբեր։ Պետական դիւանին յանձնարարված է հաւաքել տեղեկութիւններ պետական նշանակութիւն ունեցող այն գործերի մասին, որոնք պէտք է ենթարկվեն Պետական Դումայի քննութեան և տպագրել նրանց որպէս զի Դումայի անդամները նախապէս ծանօթանան նրանց հետ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՐԱՒԷՐ

Մողնոյ ս. Գէորգ եկեղեցու հայոց ծխականները հրաւիրվում են նոյն եկեղեցում բարձր սրբազան առաջնորդի հրամանով ընտրելու երկու հոգաբարձու Գայանեան ծխական ուսումնարանի համար, կիրակի, օգոստոսի 28-ին, առաւօտեան 12 ժամին։

1—2 Գրիգոր ա. ք. Տէր-Բարսեղեանց

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ԱՆԴԵՐՍՕՆԻ

Բացված է չորս ամսվայ բաժանորդագրութիւն սեպտեմբերից մինչև տարվայ վերջը։ 1905 թ. Թիֆլիսում տալիս է ամսվայ ընթացքում չորս գրքոյկ զանազան վերնագիրներով, յայտնի հեղինակների ինքնուրոյն գրուածքներ և թարգմանութիւններ։ Չորս գրքոյկը պէտք է բաղկացած լինի 100-ից մինչև 120 երեսից։ Մեծադիր։ Չորս ամսվայ բաժանորդագինն է մէկ բուբլի ճանապարհածախսով։

Հասցէն. Тифлисъ, ул. Броссе № 5. книгоиздатель А. А. Ованесянцъ.

Թիֆլիսում բաժանորդ գրվել ցանկացողները կարող են դիմել Դվորցովայա փողոց, տուն Ծովեանովի, գրասենեակ № 17. 1—2

ԲԺԻՇԿ

Լեւոն Օհանջանեան

Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.։ Կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն անկիւն Գօլովինսկի պրոսպէկտի և Կաղետսկայա փողոցի, տուն Թամամշեանի։ Մուտքը Կաղետսկի փողոցից № 2. (ա. օ.) 8—300

Բազուի ս. Լուսաւորիչ եկեղեցու համար ՀԱՐԿԱՒՈՐ են ձայներ, հայկական ձայնագրութեան և ժամերգութեան քաջ ծանօթ, հմուտ և փորձված ՏԻՐԱՑՈՒՆԵՐ։ Ցանկացողներն իրանց պայմանների մասին կարող են դիմել գործակալին կամ երեցփոխին։

Գործակալ՝ Զաւէն վարդապետ
Երեցփոխ՝ Մինաս Կաճկաճեան
(ու. կ. ե.) 5—6

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԷ

Եւ շուտով լոյս կը տեսնի

ԴԱՍԱԳԻՐՔ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Պաւել Վինոգրադովի

Ա. տարի, հին դար։ Թարգմ. խաժակի։

ԻՄ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

ԿՐՕՆԻ

ՀԵՏԵՒԵԱԼ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ

(Թոյլատրած հոգևոր իշխանութիւնից)

I ուսուցչաց համար.

1. Ուղեցոյց Հին-ուխտի . . . 15—7
2. Ուղեցոյց Նոր-ուխտի . . . 2— 5
3. Ուսուցումն քրիստ. կրօնի Դ. հատոր 1—50
4. Ուսուցումն քրիստ. կրօնի Ե. հատոր — 50
5. Մի քանի խօսք հայ կրօնուսոյցներին — 10

II աշակերտաց համար

6. Դասատետր կրօնի Ա. տարի (11 տիպ)— 20
7. Դասատետր կրօնի Բ. տարի (10 տիպ)— 25
8. Դասատետր կրօնի Գ. տարի (8 տիպ)— 30
9, Սրբազան պատմ. Հին. ուխտի (6 տիպ)— 35
10. Սրբազան պատ. Նոր. ուխտի (5 տիպ)— 40
11. Գործք առաքելոց . . . — 40

Կարելի է դիմել.

1. Ինձ—Тифлисъ, Коммерческое училище.
2. » Книжн. магаз. Гуттенбергъ.
3. » Центральная книжн. торг.

Ինձ դիմողներն ստանում են. 1) Ուսուցչաց դասագրքերի համար 35%,2) իսկ աշակերտաց՝ 20% զեղչ (Ա.տարին 25%)Աղքատ դպրոցներին ձրի։ Սահակ քհ. Սահակեանց
(չ. ո. կ.) 12—15

Հայ ընտանիք ընդունում է մի այն երկու գիշերօթիկ միջնակարգ դպրոցների

աշակերտուհի։

Կարող են պատրաստել և դասերի կրկնութիւն անել։ Լաբորատորի փող. № 11, Զալալեանի բնակարանը։ (չ. ո.) 2—2

ԿԱՐ ՈՒ ՁԵՒԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

„ՓԵԹԱԿ“

ՕՐ. Մ. ՔԱԼԱՆԹԱՐԵԱՆԻ

Աշակերտուհիների ընդունելութիւնը օգոստոսի 20-ից, առաւօտեան ժամը 9-ից մինչև 4-ը։ Ընդունվում են և գիշերօթիկ աշակերտուհիներ։ Ցանկացողները կարող են ստանալ ուսումնարանում մանրամասն ծրագիր ձրիաբար։ Архивный пер. д. № 4. (չ.ո.կ.) 5—6

ՀՐԱՒԷՐ

Վրաստանի և Իմերէթի վիճակաւոր տէր Առաջնորդի հրամանի համաձայն, պատիւ ունեմ հրաւիրել Հալաբարի Շամքորեցոց ս. Աստուածածնի եկեղեցու ծխականներին, որ ամսիս 28-ին, կիրակի, առաւօտեան ժամի 11-ին շնորհ բերել յիշեալ եկեղեցին, ծուխից երկու անձն հոգաբարձու ընտրելու, նոյն եկեղեցու գաւթում գտնվող հայոց ծխական ուսումնարանի համար։

Համազասպ աւ. ք. Տէր-Յովհաննիսեանց
(ո. շ.) 1—2

Նորին բարձր սրբազնութեան թեմական առաջնորդի հրամանով կիրակի, ամսիս 28-ին, Նորաշէնի ս. Աստուածածին եկեղեցում պատարագից յետոյ, ուղիղ ժամը 11-ին, լինելու է ծխականների ժողով՝ ընտրելու 2 հոգաբարձու նոյն եկեղեցու Մարիամեան օրիորդաց դպրոցի համար։ Ուստի նոյն եկեղեցու յարգելի ծխականներին հրաւիրում ենք ժամանակցելու այդ ժողովին,

Նախագահ ժողովի՝ Սարգիս ք. Շիրոյեանց
Երէցփոխ՝ Ստ. Մնացականեանց
(ո. կ.) 1—2

Վրաստանի և Իմերէթի թեմական առաջնորդ գերապատիւ Գարեգին արքեպիսկոպոսի հրամանով, խնդրում եմ Կուկիայի Նորաշէն ս. Աստուածածին եկեղեցու պ.պ. ծխականներին ամսիս 28-ին, կիրակի օրը 12 ժամին շնորհ բերել յիշեալ եկեղեցին Կուկիայի դպրոցի համար հոգաբարձուներ ընտրելու։

Ծխատէր Աղէքս. քահ. Տէր-Յովհաննիսեան
(ո. շ.) 1—2

Поступила въ продажу новая книга

Характеристики и воспоминанія

Г. Туманова.

ч. 2-я

Содержаніе: И. И. Свѣдѣнцовъ (Ивановичъ).—В. Л. Величко.—Макс. Горькій на Кавказѣ.—Габр. Сундукіанцъ.—А. Цагарели.—Еще объ А. Казбекѣ и З. Антоновъ.—Д. Ведребисели.—Абг. Іоаннисіани.—Ис. Е. Питоевъ.—С. К. Зубаловъ.—П. Умиковъ.—А. Т. Напейшвили.—Кн. Н. Д. Мингрельскій.—Итоги недавнаго кавк. управленія (кн. Голицынъ).—Изъ телеграфныхъ воспоминаній.

ц. 50 коп.

—

Печатается на дняхъ поступитъ въ продажу.

Къ введенію земскихъ учрежденій на Кавказѣ.

Матеріалы, собр. Г. Тумановымъ.

1—3

ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

Հայերէնի դասագիրք հեղինակների կենսագրութիւններով։

Գինն է 1 ր., գումարով առնողներին 20—25% զիջում. դիմել՝ Тифлисъ Коммерческ. учил. Ванціанъ. կամ գրավաճառներին։ (ա.օ) 2—16

1896 թ.

ԴՈՒԽԻ „Sweet Pea.“

Բրօկար եւ Ըկկ.

!Ֆինանսների նախարարութեան իրաւասութեան տակ գտնվող

ՀԱՐՈՒՍՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ

Հեղինակ «Առևտրական, գործարանական և նաւթարդիւնաբերութեան հաշուապահութեան ձեռնարկի», որ ֆինանսների նախարարութեան ուսումնական բաժնի կողմից ընդունված է իբրև օժանդակ ձեռնարկ առևտրական դպրոցներում և նրանց գրադարաններում

ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ

Երկու սեռի անձանց՝ գործնական ձևով հաշուապահութիւն 4½ ամսում։

Պարապմունքի առարկաներն են.

1) Իտալական կրկնակի հաշուապահութիւն արդիւնաբերութեան բոլոր ճիւղերի վերաբերեալ, վաճառականական, բանկային, յանձնարարական, գործարանական, նաև նաւթարդիւնաբերական և նաւթագործական հաշուապահութիւն։ 2) Առևտրական թուաբանութիւն. 3) Առևտրական թղթակցութիւն։ 3) Մուրհակային և առևտրական օրէնքներ։ 5) Վայելչագրութիւն և ուղղագրութիւն ամենավաղ ձեռագրի։ 6) Թուաբանութիւն համբիչի վրա։ 7) Գրելու վարժութիւն «Ռէմինկտոնի» գրելու մեքենայի վրա (կամաւոր)։

Կուրսերի համար դասատուներ են հրաւիրված համալսարանական կրթութիւնով իրանց գործի մասնագէտ մարդիկ, որոնք հաստատել են իրանց պաշտօնում ֆինանսների նախարարութեան ուսումնական բաժնի կողմից. գեղագրութեան համար ևս հրաւիրված է մի գեղագիր նկարիչ։

Ընդունելութիւն ամեն օր ժամը 5-ից մինչև 7-ը երեկոյեան։ Պարապմունքները սկսվում են 1905 (սեպտեմբերի 15-ից պարբերական ամեն 4 ամիս, ամենայն օր ճաշից յետոյ 60 բուբլի վճարով ամբողջ դասընթացքի համար։

Դասընթացը աւարտողներին տրվում են, ֆինանսների նախարարութեան թոյլատրված ծրագրի համաձայն, ատոհստատներ։

Դրանից անկախ, բացված է քիչ պատրաստութիւն ունեցող անձերի համար առանձին լրացուցիչ և կրկնողութեան կուրսեր ռուսաց լեզուի և թուաբանութեան համար։

Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին Թիֆլիսում Н. В. Абрамяну, Николаевская ул. № 46, ամենայն օր։ Ծրագիրն ուղարկվում է ձրի։

Վերևում յիշած ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պոստի ծախս վճարելու. ԳԻՆՆ Է 3 ր. 50 կոպէկ։ (հ. կ. ե.) 13—25

Տեղական ազգաբնակութիւնից Անդրկովկասում զեմստվային հաստատութիւններ ներմուծելու առիթով խորհուրդներ և ժողովներ կազմելու համար պատգամաւորներ ընտրելու հրահանգի II և V էջերի համաձայն և Թիֆլիսի պ. նահանգապետի օգոստոսի 9-ի № 363 առաջարկի համեմատ՝ Թիֆլիսի գաւառական ազնուականութեան պարագլխի պաշտօնակատար Ա. Մ. Սումբատովը խնդրում է Թիֆլիսի գաւառի բոլոր մասնաւոր հողատէրերին, որոնք չեն պատկանում գիւղական համայնքների կազմին, նոյնպէս և առևտրական ու արդիւնաբերական հիմնարկութիւնների տէրերին, և այն գիւղացի սեփականատէրերին, որոնք բացի գիւղական հողաբաժնից՝ ունեն նաև գնված հողեր՝—շնորհ բերել ներկայ օգոստոսի 26-ին առաւօտեան ժամը 10-ին Թիֆլիսում Վրաց ազնուականութեան քարվանսարայում, Դվորցովի փողոցում տեղի ունենալիք նախնական և ընտրողական ժողովներին՝—գաւառական խորհրդակցութեան համար պատգամաւորներ ընտրելու Անդրկովկասում զեմստվային հաստատութիւններ մացնելու հարցի առիթով։ (19, 22, 25) 3—3

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Թիֆլիս, Լերմոնտովսկայա փողոց, № 15)

Ցանկացողները ունենալ իրանց առևտրական գործերի համար ուսման ընթացքը աւարտած աշակերտներ և աշակերտուհիներ, թող բարեհաճեն դիմել կուրսերի հիմնադրին, Ս. Մանուէլեանցին։ Աւարտողները ստացել են մասնագիտական առևտրական կրթութիւն, Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի հաստատած ծրագրի համեմատ, և ունեն օրինաւոր ատեստատներ։

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՍԿՍՎԵԼՈՒ ԵՆ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-Ի

Կուրսերի ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրիապէս կուրսերն հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիները դիմում են՝ ТИФЛИСЪ, учредителю коммерческихъ курсовъ С. П. Мануэльянцу. (ո) 12—12

Дозволено цензурою. Тифлисъ, 25-го августа 1905 г. Տպարան «ՀԵՐՄԷՍ» բնկ. Электропечатная типографскаго Т—ва «Гермесъ». Мад. ул. №